Պատմության օլիմպիադայի մարզային փուլ (2025-2026 ուստարի)
11-12-րդ դասարան (տևողությունը՝ 120 րոպե)

Ընտրովի պատասխանով հարցեր (յուրաքանչյուր ճիշտ պատասխան 0,5 միավոր), ճիշտ պատասխանը վերցրե՛ք օղակի մեջ

1. Ե՞րբ է Սմբատ Արծրունին Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցում օծվել հայոց թագավոր:

1) 1441 թ. 2) 1456 թ. 3) 1476 թ. 4) 1465 թ.

2. Նշվածներից ո՞վ է եղել XII դարի նշանավոր բժիշկ, «Ջերմանց մխիթարությունը» աշխատության հեղինակը:

1) Վահրամ Ռաբունի 2) Մխիթար Հերացի
3) Հովհաննես Երզնկացի 4) Ամիրդովլաթ Ամասիացի

3. Որտե՞ղ է նահատակվել Հայաստանի ազգային հերոս Թաթուլ Կրպեյանը:

1) Մարտունաշեն 2) Քարինտակ 3) Գետաշեն 4) Մարտակերտ

4. Քանի՞ զինվոր զոհվեց թուրքական բանակից Հալիձորի 1727 թ. ճակատամարտում:

1)13 հզ 2) 15 հզ 3)17 հզ 4) 20 հզ

5. «Որոգայթ փառաց» գրքում ինչպե՞ս էր կոչվելու Հայոց ապագա պետության բարձրագույն օրենսդիր մարմինը:

1) Հայաստանի խորհուրդ 2) Հայոց տուն 3) Ազգային ժողով 4) Ազգային տուն

6. Ե՞րբ է Հովսեփ Էմինը մեկնել Սանկտ Պետերբուրգ:

1) 1761 թ. 2) 1764 թ. 3) 1766 թ. 4) 1770 թ.

7. Նշվածներից ո՞վ է եղել ԽՍՀՄ հերոս, օդաչու, ով հետմահու արժանացել է կրկնակի հերոսի կոչման:

1) Հովհաննես Բաղրամյան 3) Նելսոն Ստեփանյան
2) Հունան Ավետիսյան 4) Գևորգ Վարդանյան

8. Ո՞ր թվականին Իռլանդիային տրվեց դոմինիոնի կարգավիճակ:

1) 1919 թ. 2) 1921 թ. 3) 1923 թ. 4) 1925 թ.

9. Իրանական ո՞ր զորավարը 1736 թ. գահընկեց արեց վերջին Սեֆյան գահակալին և հռչակվեց շահ:

1) Իսմայիլ 2) Աբաս 3) Նադիր 4) Թահմասպ

10. Չինաստանի ո՞ր քաղաքում Սուն Յաթսենի գլխավորությամբ ստեղծվեց հեղափոխական նոր կառավարություն:

1) Պեկին 2) Շենժեն 3) Շանյան 4) Նանկին

Կարճ պատասխանով առաջադրանքներ

11. Ընտրե՛ք ճիշտ պնդումները *(յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5 միավոր, ընդհանուր 1,5 միավոր)*:

ա) Կատրամիդե թագուհին Զորագետի հովտում հիմսեց Սանահինի և Հաղպատի նշանավոր վանքերը, որոնք տնտեսապես հզորացան և շուտով ընդարձակ կալվածքների տեր դարձան:

բ) Լևոն II-ը 1198 թ. հունվարի 6-ին Տարսոն քաղաքի մայր տաճարում Գրիգոր Զ Ապիրատ կաթողիկոսի կողմից մեծ հանդիսավորությամբ օծվեց հայոց թագավոր:

գ) Հովհան Օձնեցու գրչին է պատկանում թոնդրակյանների վարդապետության դեմ ներկայացված «Ընդդէմ Պողիկե» գրվածքը:

դ) 1547 թ. Էջմիածնում Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսը հրավիրում է գաղտնի խորհրդակցություն, որտեղ որոշվում է պատվիրակություն ուղարկել Եվրոպա:

ե) Հայոց կաթողիկոս Զաքարիա Զագեցու նախաձեռնությամբ 869 թ. հրավիրվեց նշանավոր հայ իշխանների հատուկ ժողով, որտեղ որոշվեց Աշոտ Բագրատունուն հռչակել հայոց թագավոր:

զ) 1729-1731 թթ. թուրք զավթիչների դեմ պայքարում էր Զրաբերդի սղնախը, որի հրամանատարն էր Աբրահամ սպարապետը:

է) 1991 թ. դեկտեմբերի 5-ին պաշտպանության առաջին նախարար նշանակվեց Վազգեն Մանուկյանը:

12. Տերմինների տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ *(յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5 միավոր, ընդհանուր 1,5 միավոր)*:

ա) Դոմինիոններն ունեին ներքին ինքնավարություն, սակայն արտաքին քաղաքականության ասպարեզում կախված էին մետրոպոլիայից:

բ) Նիկիտա Խրուշչովի կողմից ձեռնարկված բարեփոխումները ստացան «վերակառուցում» անվանումը:

գ) 1736 թ. Նադիրը Արցախը դարձնում է առանձին վարչական միավոր: Արցախի մելիքությունները սկսեցին անվանվել Խամսայի մելիքություններ:

դ) Միջնադարյան հայ իրավական մտքի գլուխգործոցը Մխիթար Գոշի «Անտիոքի ասիզներ» աշխատությունն էր:

ե) Հայաստանի ազատագրման Իսրայել Օրու ծրագիրը, որը ներկայացվում է Հովհան Վիլհելմին, հայտնի է «Պֆալցյան» անունով:

զ) Տաթևում հրավիրված համազանգեզուրյան առաջին համագումարը Ինքանավար Սյունիքը հռչակեց Լեռնահայաստան:

է) Հայաստանի առաջին Հանրապետության բարձրագույն օրենսդիր իշխանությունը մինիստրների խորհուրդն էր, հետագայում՝ նախարարների խորհուրդ:

13. Նշվածներից որո՞նք են ճիշտ արտահայտում իրադարձությունների պատճառահետևանքային կապերը *(յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,5 միավոր, ընդհանուր 1,5 միավոր)*:

ա. Խոսրով Կոտակը Դվին տեղափոխեց արքունի նստավայրը, քանզի Վաղարշապատն ավերվել էր ուժեղ երկրաշարժից:
բ. Սմբատ Բագրատունին Նախճավան քաղաքի շուրջ ծագած վեճը լուծեց հօգուտ Սյունիքի, ինչից դժգոհ լինելով՝ Գագիկ Արծրունին սկսեց գործակցել Ատրպատականի ամիրա Յուսուֆի հետ:
գ. Վահանանց պատերազմի հիմնական պատճառը դարձավ Վազգեն բդեշխի սպանությունը վրաց թագավորի կողմից:
դ. Կաթողիկոսական Աթոռն Էջմիածին վերադարձնելու անհրաժեշտությունը դառնում է Հայ եկեղեցու շատ գործիչների մտահոգության առարկան, քանզի Կիլիկիայում թագավորական իշխանության վերացումից հետո այն մնաց անպաշտպան և, կտրված լինելով բուն Հայաստանից, չէր կարող լիարժեքորեն իրականացնել իր համահայկական դերակատարումը:
ե. Երբ 1729 թ. մահացավ Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը, Արցախում ազատագրական պայքարը մարեց:
զ. 1949 թ. Հյուսիսատլանտյան դաշինքի ստեղծումը և Թուրքիայի անդամակցումը այդ կազմակերպությանը ստիպեց Խորհրդային Միությանը հայտարարել, որ «ԽՍՀՄ-ը Թուրքիայից ոչ մի տարածքային պահանջ չունի»:
է. Հայերի 748-750 թթ. հակաարաբական ապստամբության արդյունքում արաբները ստիպված եղան ճանաչել Բագրատունիների իշխանությունը Հայաստանում:

Վերլուծական հարցեր

14. Լրացնե՛լ բացթողնված հատվածը *(յուրաքանչյուրը 0,5 միավոր, ընդհանուր՝ 2,5 միավոր)*:

1990 թ. օգոստոսի 4-ին Խորհրդային Հայաստանի նորընտիր Գերագույն Խորհուրդը որոշում է ընդունում անկախության հռչակագիր պատրաստելու վերաբերյալ: (1) ---------- ----- (ե՞րբ) Գերագույն խորհուրդը հաստատում է «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» հիմնարար փաստաթուղթը: Հռչակագրի առաջին հոդվածով սահմանվում էր, որ Հայկական ԽՍՀ-ն վերանվանվում է (2) ---------- ----------: Հայաստանում (3) ------ ---------- --- (ե՞րբ) անցկացվեց անկախության հանրաքվե: Անկախությանը կողմ քվեարկեց քվեարկության իրավունք ունեցողների (4) ---------- (քանի՞) տոկոսը: 1991 թ. հոկտեմբերի 16-ին Հայաստանում առաջին անգամ անցկացվեցին նախագահական այլընտրանքային ընտրություններ: Հանրապետության նախագահ ընտրվեց (5) ---------- ---------- (ո՞վ):

15. Համապատասխանեցրե՛ք պայմանագրեր/համաձայնագրերը դրանց բովանդակության հետ *(Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 0,3 միավոր, ընդհանուր՝ 1,5 միավոր)*:

1	2	3	4	5

Պայմանագիր	Բովանդակություն/հետևանք
1. Սևրի պայմանագիր	**ա.** Նախիջևանը անցնում էր Խորհրդային Ադրբեջանի խնամակալության տակ
2. 1919 թ. հունվարյան հայ-վրացական հաշտության համաձայնագիր	**բ.** Հայաստանը հռչակվում էր խորհրդային սոցիալիստական անկախ հանրապետություն
3. Բաթումի պայմանագիր	**գ.** Լոռու «չեզոք գոտու» ձևավորումը
4. 1920 թ. դեկտեմբերի 2-ին կնքված Երևանի համաձայնագիր	**դ.** Առանձին հայկական կորպուսը վերակազմակորվում է դիվիզիայի
5. 1921 թ. Մոսկվայի պայմանագիր	**ե.** Թուրքիան Հայաստանը ճանաչում էր ազատ և անկախ պետություն և համաձայնվում ՀՀ-ին զիջել հայերի պատմական հայրենիքի զգալի մասը:

16. Նշե՛ք հին հռոմեական քաղաքակրթության նշված ոլորտներում ունեցած 2-ական ձեռքբերում *(յուրաքանչյուրը 0,25 միավոր, ընդհանուր՝ 1 միավոր)*:

Ճարտարապետություն	Գիտություն (նաև ոլորտի գործիչ)
1.	1.
2.	2.

17. Ճանաչի՛ր նկարը և ներկայացրո՛ւ իրադարձությունը *(2,5 միավոր)*:



(1) Ո՞ր իրադարձությանն է նվիրված լուսանկարը: Ովքե՞ր էին կազմակերպիչները:
(2) Ե՞րբ և որտե՞ղ է այն տեղի ունեցել:
(3) Ի՞նչ փոփոխություններ առաջացրեց (նշեք 2-ը):

---

18. **Աշխատանք սկզբնաղբյուրի հետ. կարդացե՛ք և պատասխանե՛ք ենթահարցերին.**

«Հոդված 89. Թուրքիան և Հայաստանը, ինչպես և բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանազատումը թողնել Ամերիկայի Միացյալ Նահանգների որոշմանը և ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես և այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին դեպի ծով ելք տալու և հիշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր տերիտորիաների ապառազմականացման վերաբերյալ:
Հոդված 90. Այն դեպքում, երբ 89-րդ հոդվածի համաձայն սահմանագիծը որոշելիս հիշյալ վիլայեթների ամբողջ տերիտորիան կամ նրա մի մասը հանձնվի Հայաստանին, Թուրքիան այսօր արդեն հայտարարում է, որ որոշման օրից սկսած ինքը հրաժարվում հանձնված տերիտորիայի նկատմամբ բոլոր իրավունքներից և իրավահիմունքներից»:

1. Ո՞ր պայմանագրից են մեջբերված հոդվածները: Ե՞րբ է կնքվել այդ պայմանագիրը (օր, ամիս, տարի) *(1 միավոր)*:
_____
_____

2. Ի՞նչ նշանակություն ուներ պայմանագիրը հայ ժողովրդի համար (նշե՛ք 2-ը) *(1 միավոր)*:
(1). _____
_____
(2). _____
_____

3. Ինչո՞ւ չիրագործվեց պայմանագիրը (նշե՛ք 2 պատճառ) *(1 միավոր)*:
(1). _____
_____
(2). _____
_____
_____

Պատմության օլիպիադայի
Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ պ.գ.թ. Գևորգ Կեսոյան
02.02.2026 թ.